ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«08» 12 2023 թ.
№ ՊՄՇՐ-ԳԿԴ-1712

«Սարո Նաչարյան» ԱՁ -ին
ՀՎՀՀ 43235049
ՀՀ, Կոտայք, Ջրվեժ 28 փ.,11 տ.
հեռ. 77 64 82 28

ՀՀ պաշտպանության նախարարության և «Սարո Նաչարյան» ԱՁ-ի միջև 31. 05. 2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-4/8-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Սարո Նաչարյան» ԱՁ-ն մատակարարման ենթակա 5 մ «Մալուխ, էլեկտրական լար (Լար էկրանիզացված 95մմ2 (ԲՊՎԼԷ)» ապրանքատեսակի մատակարարման ժամկետը էականորեն խախտել է և սահմանված ժամկետում չի իրականացրել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2023թ. դեկտեմբերի 8-ին** միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը՝ չմատակարարված ապրանքի քանակի մասով:

Տեղեկացնում ենք, որ «Սարո Նաչարյան» ԱՁ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **830** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) և **4 150** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի 2-րդ պարբերության համաձայն)::

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **83 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **6 225** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2023թ. դեկտեմբերի 18-ը ներառյալ, Ձեր կողմից վճարվի վերը նշված **83 000** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **6 225** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Սարո Նաչարյան» ԱՁ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները, մինչև 2023թ. դեկտեմբերի 18-ը ներառյալ, ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2070 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ